ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

1134, Արմավիրի մարզ, գյուղ Ծիածան, հեռ. 093 55-75-42 E-mail tsiatsan.armavir@mta.gov.am

№ 61
«16 » հոկտեմբերի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ներկայացնում ենք՝ Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 6 հերթական նիստի որոշումները

Առդիր. «12» թերթ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 112.65/11099-15
20 10 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Ծիածանի գյուղական համայնքի ավագանու
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1134, Արմավիրի մարզ գ.Ծիածան, E-mail tsiatsan.armavir@mta.gov.am

09. հոկտեմբերի .2015 թվական թիվ 20

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 - րդ հոդվածի հինգերորդ կետով, համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 6 հերթական նիստի օրակարգը համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից;

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
2. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
3 . Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2015 թվականի հոկտեմբերի 9
գ. Ծիածան

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական
համայնքի 2015 թվականի հոկտեմբերի 9-ի
հերթական նիստի N 20 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1.ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
/ԶԵԿՈՒՑՈՂ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎՈՐԴՈՒՄԸ՝ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ, ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Օիածանի գյուղական համայնքի ավագանու
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2015 թվական թիվ 21-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՕԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետով, համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Օիածանի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արմավիրի մարզի Օիածանի գյուղական համայնքի բյուջեն հաստատելու մասին» N 35-Ն որոշման մեջ հետևյալ փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
2. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
3. Ե. ԳԱՆՊԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2015 թվականի հոկտեմբերի 9
գ. Օիածան

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական
համայնքի ավագանու 2015թվականի
հոկտեմբերի 9-ի N 21-Ն որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Ծիածան համայնքի բյուջեն հաստատելու մասին» N 35- Ն որոշման մեջ

1. Եկամտային մասում՝

ա/ Հողի հարկը պակասեցնել 550.0 /հինգ հարյուր հիսուն/ հազ.դրամ
բ/ Տեղական վճարները պակասեցնել 316.5 հազ. դրամով
գ/ Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից, ֆոնդային բյուջե հատկացված գումարից 1733.5 հազ.դրամը տեղափոխել վարչական բյուջեի պահուստային ֆոնդ
դ/ Պահուստային ֆոնդից պակասեցնել 1733.5 հազ. դրամ

2. Ծախսային մասում՝

ա/ 01 բաժին 1խումբ 1 դասի 5121 հոդվածից պակասեցնել 861.5 հազ. դրամ
բ/ 01 բաժին 1 խումբ 1 դասի 5121 հոդվածից պակասեցնել 1733.5 հազ.դրամ
գ/ 01 բաժին 1խումբ 1դասի 4111 հոդվածին ավելացնել 280.3 հազ դրամ
դ/ 01 բաժին 1 խումբ 1 դասի 4112 հոդվածին հատկացնել 917.2 հազ.դրամ
ե/ 01բաժին 6 խումբ 1 դասի 4637 հոդվածին ավելացնել 312.0հազ.դրամ
զ/ 08 բաժին 2 խումբ 3 դասի 4112 հոդվածին հատկացնել 224.0հազ.դրամ
է/ 01 բաժին 1 խումբ 1 դասի 4239 հոդվածից պակասեցնել 200.0 հազ.դրամ
ը/ 01 բաժին 1 խումբ 1 դասի 4212 հոդվածին ավելացնել 200.0 հազ.դրամ
թ/ 01 բաժին 1 խումբ 1 դասի 4269 հոդվածից պակասեցնել 113.7 հազ.դրամ
ժ/ 01 բաժին 1 խումբ 1 դասի 4111 հոդվածին ավելացնել 40.0 հազ.դրամ
ի/ 01 բաժին 6 խումբ 1 դասի 4241 հոդվածին ավելացնել 73.7 հազ. դրամ
լ/ 10 բաժին 7 խումբ 1 դասի 4819 հոդվածից պակասեցնել 200.0 հազ.դրամ
խ/ 08 բաժին 2 խումբ 4 դասի 4239 հոդվածին ավելացնել 200.0 հազ.դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Ծիածանի գյուղական համայնքի ավագանու
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1134, Արմավիրի մարզ գ.Ծիածան, E-mail tsiatsan.armavir@mta.gov.am

09 հոկտեմբերի 2015 թվական թիվ 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ, ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69- րդ հոդվածի առաջին մասով, համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ղեկավարի հաղորդումը՝ 2015 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին, երրորդ եռամսյակի համար, համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից;

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
2. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
3. Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2015 թվականի հոկտեմբերի 9
գ. Ծիածան

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական
համայնքի ավագանու 2015 թվականի
հոկտեմբերի 9-ի 22 որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

1. հողի հարկ -	3585.0 հազ. դրամ	--	1558.7 հազ.դրամ
2. գույքահարկ /շենք,շին/-	300.0	--	8.1
3. գույքահարկ/ավտոմեք/ -	1.200.0	--	1073.0
4. տեղական տուրքեր -	112.5	-	27.5
5. դոտացիա -	14447.5	-	14447.5
6. վարձակալ. հողի հարկ –	66.5	-	18.5
7. տեղական վճարներ –	316.5	-	

ԾԱԽՍԵՐ՝

01-1-1			
1. 4111- աշխատակազմի աշխատավարձ –	8730.6 հազ.դրամ	–	8312.6 հազ.դրամ
2. 4212- էլեկտրոէներգիա	1.000.0	--	876.5
3 4214- կապի ծառայություն --	198.0	-	186.0
4. 4234- տեղեկատվական թերթ –	80.0	-	78.1
5. 4216- գույքի և սարքավորումների վարձակալ	720.0	–	640.0
6. 4237- ներկայացուցչ ծախսեր /ծաղկեպսակ/ -	225.0	—	120.0
7. 4239- ընդհանուր բնույթի այլ ծառայություն	200.0	--	
8. 4261- տնտեսական ծախսեր –	250.0	--	225.8
9 4269- հատուկ նպատակ.այլ նյութեր-	150.0	–	40.0
10. 5122- վարչական սարքավորումներ –	309.2	-	170.0
11.5131- աճեցվող ակտիվներ	80.0	–	80.0
01. 3. 3			
12. 4232- համակարգչային ծառայություն -	30.0	-	28.8
13.4232 – համակարգչային ծառայություն-	231.0	-	140.0
01. 6. 1			
14 4241- մասնագիտական ծառայություն –	100.0	-	98.7
15. 4251- ընթացիկ նորոգում և պահպանում -	300.0	-	220.0
16. 4819- համայնք. ասոցացիա	- 28.0	--	
04.2.4			
17. 4639 –ընթացիկ դրամաշնորհ -	500.0	-	500.0
05. 1. 1			
18. 4213- աղբաթափություն-	960.0	.-	853.0
06. 3. 1			
19. 4213- խմելու ջրի ջրամատակարարում –	120.0	---	
08. 2.1			
20. 5132- գրադարաններ –	60.0	--	29.0
08.2.3			
21. 4111 – աշխատակազմի աշխատավարձ-	2049.0	-	1938.2
4239- միջոցառումների ծրագիր -.	450.0	-	110.0
08. 2. 4			
22. 4239- միջոցառումների ծրագիր --	693.0	-	850.0
10. 7. 1			
23 .4729- սոց. օգնություն –	1.275.0	-	1095.0
24.4819 – նվիրատվություն այլ կազմակերպութ.	200.0	--	
11.1. 2			
25. 4891- պահուստային ֆոնդ -	2.680.0		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Ծիածանի գյուղական համայնքի ավագանու
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1134, Արմավիրի մարզ գ.Ծիածան, E-mail tsiatsan.armavir@mta.gov.am

09 հոկտեմբերի 2015 թվական թիվ 23-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՈՒ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 - րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-11-րդ հոդվածներով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով համայնքի ավագանին

որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի ու վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
2. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
3. Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2015 թվականի հոկտեմբերի 9
գ. Ծիածան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական
համայնքի ավագանու 2015 թվականի
հոկտեմբերի 9-ի N 23-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ. սույն ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված օբյեկտների համար՝

բա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բբ. 501-ից մինչև 1 000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բգ. 1 001-ից մինչև 3 000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

բդ. 3 001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ:

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենյակի գործառական նշանակության փոփոխություն, ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար հինգ հազար դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար հինգ հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական և հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսուն հազար դրամ.

4) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում մեկ հազար:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար երկու հարյուր հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրող գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:

10. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Օիածանի գյուղական համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է տաս հազար դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ տաս հազար դրամ:

14. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխելու, վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու հետ կապված տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ:

15. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական վճար՝ հիսուն դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Ծիածանի գյուղական համայնքի ավագանու
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1134, Արմավիրի մարզ գ.Ծիածան, E-mail tsiatsan.armavir@mta.gov.am

09 հոկտեմբերի 2015 թվական թիվ 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 - րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից;

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
2. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
3. Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2015 թվականի հոկտեմբերի 9
գ. Ծիածան

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածան համայնքի
ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 16-ի
թիվ 6 նիստի 24 որոշմամբ

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

1. Սարիբեկյան Ռուբեն Մարգարի - 35000 / երեսունհինգ/ հազ.դրամ
2. Գրիգորյան Մարիամ Համազասպի - 35000/ երեսունհինգ/ հազ.դրամ
3. Գրիգորյան Անահիտ Վաչիկի – 35000 /երեսունհինգ/ հազ. դրամ
4. Ղարիբյան Սվետլանա Սուրենի – 35000 / քառասունհինգ / հազ. դրամ
5. Գառնիկյան Անուշ Զավենի – 45000/ քառասունհինգ / հազ.դրամ
6. Կարապետյան Գայանե Արամի -- 35000 / երեսունհինգ/ հազ. դրամ
7. Կարապետյան Արամ Աշոտի - 35000 / երեսունհինգ/ հազ. դրամ
8. Տեր- Հովհաննիսյան Սուրեն Վարդանի - 10000 /տաս/ հազ. դրամ
9. Տեր- Հովհաննիսյան Վարդգես Վարդանի -10000 / տաս/ հազ. դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ - 275000/երկու հարյուր յոթանասունհինգ/ հազ. դրամ